ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 02 » մայիսի 2018 թվականի N: 121-Ա ք.Գյումրի

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6.2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արմեն Ավետիսյանի 2018 թվականի մայիսի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արմեն Ավետիսյանին 2018 թվականի մայիսի 3-ից նշանակել «Գյումրու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝